ՀԱՂՈՐԴՈՒՄ

«Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 17-19- րդ նիստերի վերաբերյալ (2007-2008թթ.)

2007թ. մայիսից մինչև 2008թ. մարտն ընկած ժամանակամիջոցում Ֆինանսական դիտարկումների կենտրոնի նախաձեռնությամբ գումարվել է Միջգերատեսչական հանձնաժողովի 3 նիստ, որոնց ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել ու համաձայնեցվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանը վերաբերող՝ առավել կարևոր հետևյալ հարցերը.

1. Հանձնաժողովի նիստերում ներկայացվել են ՀՀ պատվիրակությունների (հիմնականում ՖԴԿ աշխատակիցների մասնակցությամբ) հաշվետվությունները՝ ՄԱՆԻՎԱԼ-ի, Եվրասիական խմբի, Էգմոնտ խմբի լիագումար և աշխատանքային խմբերի նիստերին մասնակցության վերաբերյալ:

2. Միջգերատեսչական հանձնաժողովում բազմիցս քննարկվել է կանխիկ արժույթի և վճարային փաստաթղթերի Հայաստանի Հանրապետության ներմուծման/արտահանման դեպքում հայտարարագրման պահանջ սահմանելու հարցը: Հանձնաժողովի որոշման հիման վրա ՖԴԿ-ն նախապատրաստել և համաձայնեցրել է հայտարարագրման ռեժիմը նկարագրող որոշումը, որը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվել է 2007թ. նոյեմբերի 16-ին:

3. Միջգերատեսչական հանձնաժողովը քննարկել է ՖԴԿ կողմից ներկայացված հետազոտությունը ահաբեկչության ֆինանսավորմանն առնչվող «սև ցուցակների» և դրանց վարման կարգի վերաբերյալ: Այդ կապակցությամբ հանձնաժողովը որոշել է հանձնարարել ՖԴԿ-ին հաշվետվություն տրամադրող ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց, ինտերնետային կայքում հղում կատարելու միջոցով, հասանելի դարձնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից հրապարակված «Համախմբված ցանկ»-ի թարմացված տարբերակները՝ դրանցում ներգրավված անձանց ֆինանսական միջոցների անհապաղ սառեցման պահանջով:

4. Միջգերատեսչական հանձնաժողովում քննարկվել է նաև օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների և ՖԴԿ միջև փոխըմբռնման համաձայնագրերի կնքման հարցը: Հանձնաժողովը ընդունել է որոշում համաձայնագրերի համար որպես հիմք ընդունել Էգմոնտի մոդելային համաձայնագրի տարբերակը:

5. Հանձնաժողովում առանձին քննարկման առարկա է դարձել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ ՖԱԹՖ-ի ստանդարտներին համապատասխանության կարգավիճակը: Այդ կապակցությամբ ՖԴԿ-ն հետազոտական հաղորդում է ներկայացրել նշված համապատասխանության կարգավիճակի ինքնագնահատման արդյունքների վերաբերյալ: Հանձնաժողովը որոշել է հաշվի առնել ինքնագնահատման արդյունքները ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նոր օրենսդրության լրամշակման ժամանակ:

6. Միջգերատեսչական հանձնաժողովը դիմել է ՀՀ Նախագահին՝ իր կազմում համապատասխան փոփոխություններ կատարելու խնդրանքով: Այդ նպատակով 2008թ. ապրիլի 2-ին ՀՀ Նախագահն ընդունել է թիվ ՆԿ-60-Ա կարգադրությունը, որով վերահաստատել է հանձնաժողովի հետևյալ կազմը՝

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ (հանձնաժողովի նախագահ)
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավար (հանձնաժողովի քարտուղար)
3. Հայաստանի Հանրապետության Նախագահի օգնական
4. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ
5. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ
6. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ
7. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ
8. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ
9. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության պետի տեղակալ
10. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահի տեղակալ
11. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի տեղակալ
12. Հայաստանի Հանրապետության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի ղեկավար
13. «Հայաստանի բանկերի միություն» իրավաբանական անձանց միության նախագահ
14. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ: